գրեթէ երեք անդամ, բնակչութեան կազմով էլ երկու անդամ մեծացաւ, իր մէջ առնելով հետեւեալ գաւառները եւ շրջանները.— նախկին Երեւանի նահանգը գրեթէ ամբողջապէս (Շարուր–Նախիջեւանը կարճ ժամանակով), Կարսի նահանգից՝ Կարսի եւ Կաղզուանի գաւառները, Արտահանի մեծ եւ Օլթիի փոքր մասը, Գանձակի նահանգից՝ Զանգեզուրը եւ Իջեւանը, ինչպէս նաեւ, վաստօրէն լեռնային Ղարաբաղը, Թիֆլիսի նահանգից էլ՝ Լոռիի մեծ մասը: Այնպէս որ 1920–ի ամրան, քեմալօ–բոլշեւիկեան արշաւանքի նախօրէին, Հայաստանի Հանրապետութիւնը իր մէջ էր առնում մօտ 50 հազար քառակուսի քիլոմէթր տարածութիւն եւ 1 միլ. 2 հարիւր հազար բնակիչ, ընդշող մեծամասնութեամբ՝ հայ:

Այդ, ինչպէս եւ յետագայ տարիների վիճակագրութիւնը աւելի եւս պարզ կացուցանելու համար առաջ բերենք Անդրկովկասի հայկական եւ հայաբնակ գաւառների ու շրջանների հողային տարածական պատկերը, մօտաւոր հաշուով:

Ա. Անդրկովկ. Հայաստանը, քեմալօ–բոլշեւիկեան դէպքերից յետոյ.

	Քառ. քմթ.
1. Երեւանի գաւառ	3,140
2. Էջմիածնի գաւառ	3,750
3. Ալ–պոլի (այժմ Լենինական)	3,300
4. Փամբակ–Լոռի	5,000
5. Իջեւանի գաւառ	4,000
6. Նոր Բայազէտի գաւառ	4,790
7. Դարալագեազի գաւառ	2,000
8. Զանգեզուր (եւ Մեղրի)	5,000
Ընդամէնը՝	30,980

Այս է ուրեմն, արդի Հայաստանի տարածութիւնը, մօտաւոր հաշուով, որ մենք արել ենք տարիներ առաջ:

Խորհրդային մի վիճակագրութեան նայելով՝ Արդի Հայաստանի սահմանների մէջ առնուած են՝ նախկին վարչական միաւորները նկատի ունենալով, հետեւեալ տարածութիւնները.—

	Քառ. վերստ
1. Երեւանի գաւառից (հին)	2,533
2. Ալէք–պոլի գաւառից	3,250
3. Նոր Բայազէտի գաւառից	5,375
4. Շարուր–Դարալագեազից	1,874
5. Էջմիածնի գաւառից	3,348
6. Նախիջեւանի գաւառից	167
7. Ղազախից (Իջեւանի շրջան)	2,687
8. Ջիվանշիրից	127
9. Զանգեզուրից	3,919
10. Կարսի գաւառից	578
11 Բորչալուի գաւառից	2,418
Ընդամէնը՝	26,326

Այս վերջին, համագումար թուի փոխարէն ասուած է 26,358 քառ. քմ., որ անշուշտ գումարման կամ տպագրական սխալ է:

Վերոյիշեալ թուերն էլ (26,326 քառ. վերստ եւ 30,980 քառ. քմթ.) գրեթէ նոյնանում են: Փոքրիկ տարբերութիւնը երեւի Սեւանայ լճի մակերեւոյթը նկատի առնուած կամ չառնուած լինելուց է առաջ գալիս: Նոր Բայազէտի (նախկին) գաւառի տարածութեան համար եղած տարբեր թուերն էլ նոյն պատճառով բացատրելու է անշուշտ:

Հողային–տարածական տեսակէտից ամբողջացնենք պատկերը, նաեւ ինչ Հայաստանի արդի սահմաններից դուրս գտնուող հայաշատ եւ հայաբնակ գաւառներին է վերաբերում:

Ա. Թուրքիոյ գրաւման տակ.

	Քառ. քմթ.
1. Սուրմալուի գաւառ	3,650
2. Կարսի գաւառ	5,800
3. Կաղզվանի գաւառ	4,450
4. Արդահանի գաւառ (հայկ. մս.)	4,000
5. Օլթիի գաւառ	3,050
Ընդամէնը՝	20,950

Բ. Ատրբէջանի գրաւման տակ.

	Քառ. քմթ.
1. Շարուր–Նախիջեւան	5,600
2. Լեռնային Ղարաբաղ («Քիւրդ–Կրայ» եւ Լեռն. Գանձակը մէջը)	12,000
Ընդամէնը՝	17,600

Գ. Վրաստանի գրաւման տակ

Ախալքալաքի գաւառ (2,800 քառ. քմ.) եւ Բորչալուի մէկ մասը (2,200 քառ. քմ). ընդամէնը՝ 5,000 քառ. քմ.: